

**ՀԱԸՄ Սկաուտի Օր
Լոնտոն
2006**

Ինչպես ամեն տարի այս տարի եւս ՀԱԸՄ Լոնտոնի մասնաճիւղը տոնեց Հայ Սկաուտի օրը եւ մասնաճիւղիս 27-րդ տարեդարձը:

Ձեռնարկը տեղի ունեցաւ Շաբաթ Սարտ 25, 2006-ին, Երեկոյեան ժամը 7:30- ին, Acton Town Hall-ի մէջ:

Շուրջ հինգ շաբաթ էր արդէն որ այս ձեռնարկի համար միութիւնը բացառիկ եռուզեռ մը կապրեր: Ձեռնարկի նախապատրաստութիւնը ստանձնած էր՝ ճշտուած մասնաւոր յանձնախումբ մը, կազմուած ներկայի եւ անցեալի սկաուտ անդամներէ եւ այլ միութենականներէ: Կազմակերպիչ յանձնախումբը օրուայ պատասխանատութիւնը վստահած էր երկար տարիներու փորձառութիւն ունեցող, եղբ. Սերժիկ Աբելեանին որը բացառիկ պծախնդրութեամբ կատարեց իրեն յանձնուած այս դժուարին պարտականութիւնը ընդհանուր խմբապետուհի քոյր Թինա Իւսեֆխանեանի հովանաւորութեամբ:

Ձեռնարկին ներկայ էին մասնաւոր հրաւիրուած հիւրեր գաղութիս Երեւելի անձնաւորութիւններէն: Հրաւիրեալներու մէջ էր Շրջանիս Հոգեւոր առաջնորդ Հայր Նաթան Սրբ. Յովհաննիսեան եւ Սեծն Բրիտանիոյ եւ Իրլանդայի ՀՀ Լիազօր դեսպան Տօք. Վ. Գաբրիէլեան: Ներկայ էին նաեւ Լոնտոնահայ Համայնքային եւ Եկեղեցական Խորհուրդի Նախագահն ու անդամները, քոյր եւ այլ միութիւններու վարչութիւնները եւ հոծ բազմութիւն մը ծնողներու ու համակիր շրջանակի:

Երեկոն սկսաւ դրօշակակիրներու մուտքով որուն յաջորդեց սկաուտական խումբերու տողանցքը՝ իւրաքանչիւրն իր պատասխանատուով որոնց ներկայացումը տեղի ունեցաւ մէկ առ մէկ օրուայ Խօսնակի միջոցով: Բացման արարողութիւնը սկսաւ օրուայ միութեանս եւ ՀՀ քայլերգներով:

Բացման արարողութեան վերջաւորութեան տեղի ունեցաւ շարք մը պաշտօններու, աստիճաններու եւ գնահատականներու բաշխումներ որուն յաջորդեց օրուայ խօսքերը: Սկաուտ Խորհուրդի խօսքը արտասանեց Խորհուրդի անդամ, Երեց - պարմանուհի հատուածի պատասխանատու, քոյր Վիքթորեայ Հովսէփեան: Քոյրը իր խօսքի վերջաւորութեան շեշտեց որ՝ մեր միութեան եւ ազգային կեանքի շարունակականութիւնը ապահովուած է ոչ միայն մի շարք նուիրուած եւ համեստ անձնաւորութիւնների սիրայօժար աշխատանքի բերումով՝ այլ նաեւ ՀԱԸՄ-ի գեղեցիկ եւ վեհ միութենական ու ազգային գաղափարների համոզումով:

Սկաուտ Խորհուրդի խօսքէն ետք Ելոյթ ունեցաւ վարչութեան նախագահ եղբ. Ֆրէդ Հայրապետեան որը շնորհակալութեան պատշաճ իր խօսքը ուղղեց լոնդոնահայ գաղութին եւ ի մասնաւորի սկաուտներու ծնողներուն իրենց ցուցաբերած թանկագին օժանդակութեան համար մասնաճիւղիս աշխատանքներուն: Եղբոր խօսքին յաջորդեց Սրբազան Հօր օրուան պատշաճ հայրենաշունչ պատգամը ուղղուած սկաուտներուն ու ներկաներուն:

Նախքան առաջի բաժնի փակումը՝ տեղի ունեցավ միութեանս 27-րդ տարեդարձի արարողութիւնը որու ընթացքին մասնաւոր պատրաստուած կարկանդակը բերուեցաւ սրահ եւ որը՝ կտրեցին միութեանս ամենափոքր տարիքի երկու սկաուտ անդամներ Սրբազան Զօր ընկերակցութեամբ:

Ձեռնարկի երկրորդ բաժինը կը պարունակէր զանազան մշակութային եւ գեղարուեստական ելոյթներ որոնք մեծ գնահատանքի արժանացան ներկաներու կողմէ:

Այս բաժնի մէջ առաջին անգամ ըլլալով օգտագործուեցաւ համակարգիչներու միջոցով պատրաստուած ձեռնարկի ընդհանուր նախապատրաստական աշխատանքներու ցուցադրումը: Ներկաները մեծ հաճոյքով դիտեցին եւ ծանօթացան բոլոր ելոյթներու պատրաստման ընթացքին կատարուած փորձերուն ու աշխատանքներու ընդհանուր դժուարութիւններուն:

Արժանի է յիշել նաեւ օրուայ նուագախումբը: Երկար ժամանակէ ի վեր, առաջին անգամ ըլլալով խումբ մը սկաուտներ քով քովի եկած՝ անցեալի պատասխանատու, աւագ եղբայր Լազար տէր Գրիգորեանի ղեկաւարութեամբ կազմեցին գեղեցիկ նուագախումբ մը որը ամբողջ երեկոն իր սկաուտական, ազգային եւ յեղափոխական նուագներով խանդաւառեց ներկաներուն:

Ձեռնարկը իր աւարտին հասաւ ներկաներու բուռն ծափահարութիւններով: Նախապատրաստական երկար աշխատանքներու հոգնութիւնը վարձատրուած էր: Պատասխանատուները՝ համայն սկաուտներով մեծ բաւարարութիւն մը կ'զգային արժանանալով ծնողներու խիստ գնահատանքի զգացումներուն եւ գովասանքի խօսքերուն:

Ներկաները բաւարարուած տուն գացին իսկ պատասխանատուներու եւ իրենց օժանդակող միութենականներու գիշերը նոր պիտի սկսէր՝ սրահի մաքրութեան եւ հաւաքման աշխատանքներով որուն դեռ պիտի յաջորդէր օրուայ ընթրիքը:

Այս առթիւ վարչութեան եւ Սկ. Խորհուրդի անունով խորին շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր անոնց որոնք ամէն ջանք դրին այս ձեռնարկը յաջողութեամբ պսակելու:

Ովսաննա Աթանոսեան
Սկ. Խորհուրդի անդամ
Արի Արեւուշ հատուածի Պատասխանատու
Լոնտոն 05/04/06